ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Տարբերակված ուսուցման ազդեցությունը՝ աշակերտների անուշադրության վերականգնման գործում:

Մասնակից՝ Շ.Խ.Խոստեխյան

Դպրոց՝ Ապագայի Հ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց /ՊՈԱԿ/

Վերապատրաստող՝ Կ.Գ.Ավետիսյան

Վաղարշապատ 2022թ.

Նախաբան

<< Միայն այն ուսուցիչն է հմուտ ով լավ գիտի,թէ ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանա-պարհով է պետք հասնել այդ գիտելիքներին>>:

/Վ.Ա.Սախումլինսկի/

Հետազոտությունները ցույց են տվել,ու բոլոր սովորողների կարիքները բավարարելու ամենաարդյունավետ ուղիներից մեկն՝ուսուցումն տարբերակելն է:

Տարբերակվածուսուցման ռազմավարության նպատակն է ընդհանուր կրթության,բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝նրա ընդունակությունների,հակումների,ճանաչողական պահանջմունք-ների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ,որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ,գնում են իրենց ճանապարհով:

Տարբերակված ուսուցման պայմաններում,ուսուցման պչոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին :

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով,որտեղգործունեության նպատակը,բովանդակությունը,մեթոդները,ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝

1. **Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները**
2. **Խմբավորել սովորողների ըստ իրենց անհատական առանձնահատկությունների**

3. **Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:**

Ընտրելեմ<<Տարբերակվածուսուցմանռազմավարություններիկիրառումը՝ուսումնառությանխթանմանհամար>>թեման,քանիորունեմանհանգստացնողխնդիրնայսհետազոտականաշխատանքիմիջոցովկփորձեմլուծելխնդիրընավելիբարձրացնելդպրոցիսնհատկապեստվյալխնդրահարուցդասարանիուսուցմանարդյունավետությունը:

Խնդիրը հետևյալն է.

Ութերորդ դասարանում աշակերտների մի մասի մոտ նկատվում է դասի նկատմամբ անուշադրություն,ցրվածություն,հոգնածություն,անտարբերություն,ոչ կենտրոնացվածություն, որը մեծապես մտահոգում է ինձ:

Տվյալ դասարանում հետազոտական աշխատանք անցկացնելով կփորձեմ բացահայտել խնդրի խորությունը,բարդությունները և վեր հանելով դա,փորձել լուծում տալ այն բացթողումները,որը պատճառ է դարձել աշակերտների մոտ տվյալ խնդրի ի հայտ գալուն:

Որոշ դիտարկումներ վերլուծություններ,մանկավարժական խմբի հետ զրույցներ անցկացնելով՝ հանգել եմ այն մտքին,որ դասարանում պետք է հաճախակի կիրառել նոր,հետաքրքիր,տարբերակվող,մոտիվացնող մեթոդներ,նոր ռազմավարություններ. Այսինքն ուսուցումը լինի անհատական և տարբերակված:

Կարծում եմ այս հետազոտական աշխատանքը տվյալ խնդրահարույց դասարանում կիրառելուց հետո,կունենամ դրական փոփոխություններ և առաջընթաց տվյալ աշակերտների մոտ:

<< Աշակերտներին պետք է սիրով գրավել և երբեմն՝ զիջումով նվաճել>>

/ Ն. Աղբալյան /

Հետազոտական համատեքստ

Ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում:

Նոր դարը,նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ են դնում,որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Խոսքը ոչ միայն կրթության ոլորտում ,քանակական փոփոխությունների,այսինքն՝սովոչողներին տրվող գիտելիքների ծավալը մեծացնելու,այլ նախ և առաջ որակական փոփոխությունների մասին է:

Գրտելիքից բացի սովորողին ահրաժեշտ է նաև դրանք կիրառելու իրական կարողություններ և հմտություններ՝ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ,ստեղծագործական միտք ձևավորել,ուղղորդել նրա ներքին ուժերը ու հնարավորությունները:

Տարբերակված ուսուցման մասին իր կարծիքն է հայտնել ամերիկացի մանկավարժ ***Քորոլ Էնթոմլինոնը***: Նա տարբերակված ուսուցումը բաժանել է 3 տեսակների .

.Ըստ բովանդակության դասակարգում

1. Ըստ գործողությունների
2. Ըստ վերջնարդյունքների
3. Ըստ միջավայրի

Տարբերակված ուսուցման իրականացնելիս հաշվի է առնվում սովորողի՝

1. Պատրաստակամությունը կամ կարողությունները
2. Հետաքրքրությունների շրջանակը
3. Ուսումնառության ոճը

Այս անենը կիրառելու արդյունքում բարձրանում է

1. Սովորողի շարունակական զարգացումը
2. Սովորողի մոտիվացիայի դրսևորումը
3. Արդյունավետությունը

Գերմանացի մանկավարժ,փիլիսոփա,գրող,հասարակական և քաղաքական գործիչ Ադոլֆ Դիստերվեգը ականավոր դեմոկրատ-մանկավարժներից մեկն է, << Գերմանացի ուսուցիչների ուսուցիչը>>: Նրա բազմամյա հասարակական-մանկավարժական գործունեությունը ցայտուն կերպով արտահայտված առաջադիմական բնույթ ուներ: Դիստերվեգը պայքարել է ուսուցման դոգմատիզմի դեմ,նա ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծում էր որպես նորարար և ձգտում էր իր ժամանակի դիդակտիկան ազատել ձևականության տարրերից: Նա ձգտել է ժամանակակից կրթությունը վերակառուցել առաջավոր գաղափարների հիմունքներով,ժողովրդական ուսուցիչներին զինել գիտելիքներով և մանկավարժական վարպետությամբ ,պաշտպանել նրանց քաղաքացիական իրավունքները:

Տարբերակված ուսուցման մեթոդների և հատկապես ակտիվ մեթոդի մասին իրենց կարծիքներն,օրինակներն և փորձարկումներն են ներկայացրելն ***Լ.Ս.Վիգոտսկին, Վ.Ն.Կրուգլիկովը Գ.Աբրամովան,Յու.Ս.Հարությունովը,Ս.Խաչատրյանը,Ս.Ս.Էգորովը,Վ.Մ.Եֆրիմովը,Վ.Ա.Պլատովը, Ա.Մ.Սոմոլկինը և ուրիշներ:***

Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեությամ մեջ : Ուսուցմանը հետևում է զարգացումը,իսկ անձը զարգանում էգործունեության մեջ: Մեթոդների տարածման գործում մեծ դեր ունեցավ նրանց գործնական կիրառումը՝խաղային մեթոդները,որպես ակտիվ ուսուցման հիմք:

Այսպիսով տաբեր մեթոդիստների,մանկավարժների կիրառական փորձը ցույց է տվել որ տարբերակված ուսուցումն ունի իր արդյունավետության բարձր սանդղակը: Ամենակարևորը . նման ուսուցման միջոցով աշակերտի մոտ ձևավորվում է ինքնքվստահություն ,ավելի ինքնուրույն և կայուն է դառնում, էլ ավելի վստահ է լինում սեփական գիտելիքի վրա,կարողանում է կարծիքներ և տեսակետներ արտահայտել:

Տարբերակված ուսուցումն իսկապես կարևոր ռազմավարություն ունի դպրոցի կրթական գործում:

Գործնական համատեքստ

<<Մենք բոլորս հանճարներ ենք,բայց եթե դուք պետք է

ձկան մասին դատեք նրա ծառ բարձրանալու կար-

ողությամբ,ապա նա ողջ կյանքը կապրի՝իրեն

ամենավերջին անհաջողակը համարելով>>:

/ Ալբերտ Էյնշտեյն/

Ուսուցչի մասնագիտությունը պատվավոր է և հրապուրիչ՝միաժամանակ այն պատաս – խանատու մասնագիտություններից է :Նրա դերն ու նշանակությունը միշտ էլ մեծ է եղել հասարակության զարգացման համար մղվող ընդհանուր պայքարում : Հենց այդ պայքարում էլ առանձնահատուկ դեր նունի պատմության ուսուցիչը: Նոր մարդու դաստիարակման գործում նրան հատկացված է գլխավոր տեղերից մեկը և նրա վրա դրված են մեծ պարտականություններ :Պատմության դասընթացի յուրացումը կախված է ուսուցչից,մեթոդներից,ուսուցման կազմակերպման ձևերից ,մեթոդներից,դպրոցականների հետ ունեցած փոխհարաբերություններից:

Նախ՝ ընդհանրապես մանկավարժական աշխատանքի համար անհրաժեշտ են որոշակի տվյալներ. Սեր երեխաների նկատմամբ,մտքի և խոսքի աշխուժություն, մտածողության,տրամաբանության ճկունություն,պահանջկոտություն,որոնք պետք է զուգակցվեն սովորողների նկատմամաբ մեղմ վերաբերմունքին,նրանց ներթաքուն մտքերը,հետաքրքրությունները,ցանկությունները հասկանալու կարողություն:

<< Ուսուցչի աշխատանքը սրտի և նյարդերի աշխատանք է, -գրում է Սուխոմլինսկին,- հսկայական հոգևոր ուժերի ամենօրյա,ամենժամյա ծախսում>>:*

Կարևոր նշանակություն ունի ուսուցչի անձնական օրինակը, դա այն անշեջ հուրն է, որ ջերմացնում, բոցավառում է աշակերտի հետաքրքրությունը,մանավանդ երբ խոսքի և գործի ներդաշնակություն կա,չէ որ մարդու բնավորությունը չի ձևավորվում միանգամից: Դպրոցում դաստիարակաում ենք ամենից առաջ ոչ թէ այս կամ այն մեթոդով ,այլ սեփական անձի ,անհատականության ազդեցությամբ:

*Վ.Ա.Սոխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>> Եր.<<լույս>>1977 էջ 35

Սակայն այդ ընդհանուր տվյալները բավական չեն հասարակագիտության ուսուցիչ դառնալու համար: Հասարակագիտության ուսուցիչը պետք է զինված լինի հասարակական գիտության խոր իմացությամբ: Հասարակագիտության ուսուցիչը պետք է խորությամբ իմանա հոգեբանություն և ընդհանուր մանկավարժություն, որոշակի գիտելիքներ ունենա միջնակարգ դպրոցում դասավանդվող հարակից այլ առարկաներից: Նա լավ պետք է հասկանա և միջազգային կյանքը, և երկրի ներքին կյանքը,պետք է լինի մեծ հայրենասեր:

Միջնակարգ դպրոցը միշտ էլ կարիք ունի լավ ուսուցիչ-դաստիարակողների, մանկավարժական գործի վարպետների, մանկավարժի աշխատանքը սիրողների: Պետք է միշտ հիշել, որ մեծ չափով հասարակագիտության ուսուցչից է կախված մեր երկրում երիտասարդության շրջանում կուռ աշխարհայացքի և բարոյականության զարգացման մակարդակը:

Ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում:

Առաջին ուղին, որ շատ կարևոր է,ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստվածությունն է: Ուսուցիչը պետք է սիրի իր մասնագիտությունը, սիրի երեխաներին: Լիարժեք տիրապետի այն առարկային ,որը դասավանդում է: Ունենա մեթոդական,հոգեբանական,հարուստ գիտելիքներ,լինի համակողմանի զարգացած,ունենա լայն մտահորիզոն: օժտված լինի բարձր բարոյական որակներով:Իր մեջ մարմնավորի իսկական ուսուցչի կերպարը:

Երկրորդ ուղին դասի նպատակների, խնդիրների ճիշտ որոշումն է :

Երրորդ ուղին դասի ընթացքում սովորողների գործունեության բարձրացումն է: Այստեղ զարգացվում է սովորողի ճանաչողական, ստողցագործական ընդունակություններն ու կարողությունները: Հարկավոր է հասնել նրան, որ սովորողները և դասի ընթացքում, և դասից դուրս կարողանան կիրառել իրենց ձեռք բերածգիտելիքները, դրանց մեջ տեսնեն գլխավորը,առանձնացնեն հիմնականը: Դասի ընթացքում և ուսուցիչը, և աշակերտը պետք է հանդես գան որոնողի դերում:

Չորրորդ ուղին ուսուցման կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերի խելացիորեն գործադրումն է:

Դա նշանակում է իմանալ, թէ դասի որ փուլում կիրառել պրոբլեմային,ծրագրավորված կամ անհատականացված ուսուցման տարրերը:

Հինգերորդ ուղին աշակերտների անհատական առանձնահատկությունների ճանաչումն ու դրանց հաշվի առնումն է:

Վեցերորդ ուղին դասի ընթացքում դիտազննական պարագաների,ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ,ուղեղի օգտագործումն է:

Դասի արդյունավետության բարձրացման միջոցներից են մեթոդները: Ուսուցման մեթոդները,փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև,ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի,հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ անպայման իր առջև դնում է երկու կարևու հարց. << Որն է կրթության նպատակը, և ինչ պետք է սովորեցնի ինքն իր աշակերտներին>>: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն դա դեռևս բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Որքան էլ ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում,սակայն այդ գործողությունը չի կարող կամայական բնույթ կրել: Այդ խնդրի իրագործման հաջողությունը պայմանավորնած է մի շարք գործոներով:

1. Ուսուցման նպատակը,խնդիրները
2. Բովանդակությունը
3. Նյութի քանակը և բարդությունը
4. Սովորողների տարիքային առանձնահատկությունները
5. Սովորողի պատրաստվածության մակարդակը
6. Ուսումնական ժամանակը
7. Ուսուցչի պատրաստվածության մակարդակը

Տարբերակված ուսուցման արդյունավետությանը բարձրացնող ուսուցման կազմակերպման ձևերից են՝համագործաքցային ուսուցումը,խմբային աշխատանքը,զույգերով աշխատանքը, անհատական աշխատանքը:

Այս հետազոտական աշխատանքը անցկացնում եմ 9-րդ դասարանում,Սեպտեմբերի 1-ից Սեպտեմբերի 15-ը,քանի որ այստեղ ունեմ խնդիր, և կփորձեմ այն հաղթահարել: Խնդիրը հետևյալն է.Դասի ընթացքում՝ ակտիվ քննարկումների,հարց պատասխանների, ինչպես նաև դասապատրաստվածության,տնային առաջադրանքները կատարելու մեջ թերանում են Մանուկը, Գոռը, Սյուզաննան և Համլետը: Նրանք դասի ընթացքում շատ անտարբեր և անուշադիր են, ցրված,հոգնած,ոչ կենտրոնացված, մի խոսքով կարծես դասին ներկա չլինեն:

Այս խնդիրը հաղթահարելունպատակով ընտրելեմ<<Տրբերակված ուսուցման ազդեցությունը՝ աշակերտների անուշադրությանը վերականգնման գործում>>թեման , և այն լիարժեք կիրառելով՝ կփորձեմ հասնել նպատակիս:

Աշակերտներիս մոտ այս անտարբեր վիճակն վերացնելու և խնդիրն հաղթահարելու միակ ճանապարհը տեսնում եմ դասավանդման,դասի մատուցման,հարցման ընթացքը ավելի հետաքրքիր,գունագեղ,մոտիվացնող դարձնելու մեջ:

Տարբերակված ուսուցումն լիարժեք հնարավորություն է տալիս կիրառել նոր մեթոդներ, հնարներ,որ խթանում է դասի արդյունավետությանը: Մեթոդները բազմազան են և հետաքրքիր, սակայն ուսուցչից պահանջվում է մեծ հմտություն, որպեսզի յուրաքանչյուր դասի համար ընտրի ճիշտ և օգտավետ մեթոդ: Երբեմն սխալ ընտրված մեթոդները,շատ ավելին խանգարում են դասապրոցեսին,քան օգնում. Հետևաբար ուսուցչի մանկավարժական հմտությունը և դասին նախնական պատրաստվելն շատ կարևոր է:

Նախ առաջինը դասը հետաքրքիր անցկացնելու համար պետք է այն վարել ակտի մեթոդով: Ակտիվ մեթոդը բավականին բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը,այն չափվում է ոչ միայան և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով,որքան նրա ձեռք բերած կարողություններով՝շեշտը դնելով արդյունքի վրա,այսինքն՝ ի՞նչ կարող է նա անել: Այս

խնդիրը լուծելի է դառնում,երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

. Ուսումնառության ընթացքում աշակերտը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակից:

. Ուսուցիչ հրաժարվում է սովորեցնողի,վերահսկողի,խրատողի իր դերից և դառնում էայդ գերծընթացը կազմակերպող,խորհրդատու,և որպես գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցում է որոնողական աշխատանքներին:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելուգործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում,այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը:Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ,մեզ պետք է ուշադրության կենտրոնացում:Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար,այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Բիզնես ընկերությունները վաղուց են հասկացել,որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է:Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել,ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին,փողերին ու ազդել նրա վրա:

Պատահական չէ,որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել <<ուշադրության տնտեսություն>>արտահայտությունը:Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է , որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների,գործնեության տեսակների կողմից:Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է :Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը :Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի , կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է:Մանագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված,օգտագործել գծապատկերներ,պատմություններ,նկարներ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Նման դասավանդման արդյունքում աշակերտի մոտ կարճաժամկետ հիշողությունից անցում է կատարվում

երկարաժամկետ հիշողությանը: Նման արդյունքին կարելի է հանգել միայն նոր մեթոդներ կիրառելու դեպքում: Այդ դիդակտիկ նյութերն,գծապատկերները,նկարները,խաղային մեթոդներն են ստիպում աշակերտին նյութը հեշտությամբ և հաճելի յուրացնել և երկար հիշել:

Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքի ընթացքում կարևորել եմ և առանձնացրել արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումները,ինչպես նաև այլ մեթոդներ և հնարներ,որը կներկայացնեմ ստորև: Առաջինը դա՝

1. Մտաբերում

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են,որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է,իմացածը դուրս բերելը:

2. Նյութի սփռում ժամանակի մեջ

ԱՄՆ-ի Հարավային Դակոտայի համալսարանի պրոֆեսորների՝Դուգ Ռոհերի և Քելլի Թայլորի անցկացրած գիտափորձից եկել են այս հետևության.Կարճ ժամանակում սովորածը շատ ավելի արագ է մոռացվում,քան երկար ժամանակում սովորածը:

3. Խառը ուսուցում

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել,որ ուսուցումն առավել արդյունավետ է,երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը:

4. Մանրամասնում

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է:Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը: Հաճախ հետադարձ կապ տալիս ուսուցչները միայն նշում են, թե ինչն է ճիշտ կամ սխալ,մինչդեռ կարևոր է մանրամասնել ,թե ինչու՞ է դա սխալ:

5. Օրինակներով ուսուցում

Եթե ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի,ապա նյութը հասկացող աշակերտների թիվն էապես կավելանա:

6. Պատկերի և տեքստի համադրում

Աշակերտները շատ ավելի լավ են յուրացնում այն ամենը,ինչ ուղեկցվում էպատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծանկարներ, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ և այլն:

7.Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը,թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից:Այս երևույթը կոչվուն է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Դասի սկիզբ

Յուրաքնչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Հազորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել,թե ոչ:Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է : Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը,ապա դա էապես կնպաստիդասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

1. Խորհրդավորություն
2. Գուշակություն
3. Զրմանք,անսպասելիություն
4. Մեջբերումներ
5. Գիտեմ,ուզում եմ իմանալ,սովորեցի
6. Մտագրոհ
7. Համգործակցություն,հակամարտություն,համակեցություն

Այս մեթոդներից իմ առաջին դասի ընթացքում կիրառեցի մտագրոհ հնարը: Թեման էր. Սահմանադրություն և Ժողովրդավարություն: Մտագրոհ վարժությամբ փորձեցի անդրադարձ կատարել և վերհիշել <<Ի՞նչ է սահմանադրությունը և ի՞նպես է այն ընդունվում>> և <<Ի՞նչ է ժողովրդավարությունը>> մտքերի շուրջ: Այնուհետև կարճ դասխոսության միջոցով ներկայացրեցի նոր նյութը:

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը,որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել:Հետևաբար՝նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի,որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Կարևոր փաստերից է նաև երկար և կարճ նախադասությունների օգտագործումը: Օրինակ ՝լավ կլինի երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախատասություն:Հետո միջին չափի նախադասություն,որպեսզի դասի նյութը աշկերտի մոտ պարզ և հասկանալի լինի:

Այնուհետև ստեղցեցի 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Քանի որ դասարանում աշակերտների թիվը քիչ է ,ձևավորվեց երկու խումբ: Խմբերին հանձնարարվում է ծանոթանալ տեքստին: Մի խումբը ստանում է ***հետազոտական կենտրոն*** անվանումը, մյուսը ***բացահայտողների կենտրոն***: Կենտրոններ ձևավորելուց հետո յուրաքանչյուր խումբ սկսում է աշխատել հանձնարարված թեմայի շուրջ:Հետազոտական կենտրոնը, հետազոտում և ուսումնասիրում է Սահմանադրության ընդունման կարգը, ,իսկ բացահայտողների կենտրոնը փորձելու է բացահայտել ժողովրդավարության դրական կողմերը:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը ևօգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝համացանց,գրականություն,փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր սահմանադրության վերաբերյալ:

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը,կատարում նշումներ,վեր հանում վերջինիս հիմնական միտքը,ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հանձնարարված նյութերին ծանոթանալուց հետո,խմբերն անցնում են աշխատանքի: Հետազոտական խումբը գրատախտակին գծում և նշում է Սահմանադրության փոփոխությունները

Բացահայտողների խումբն էլ A4 ֆորմատի թղթի վրա և ներկայացնում ժողովրդավարության դրական կողմերը

Այս բոլոր առաջադրանքները կատարելուց հետո , մի քանի հարցերի միջոցով ամրապնդեցինք դասը և առավել ակտիվներին գնահատեցի: Համլետին գնահատեցիմք 6

դասին աշխատելոյ և ակտիվություն ցուցաբերելու համար: Մյուս խնդրահարույց աշակերտները պասիվ էին այս դասին:

Վերջում. Տնային հանձնարարություն.Պատասխանել դասի հարցերին.Գրել նոր հասկացությունների բացատրությունը.

Հաջորդ հետազոտական դասընթացների ժամանակ,խմբային աշխատանքները,նոր մեթոդները և հնարները մի փոքր ակտիվացրեցին Գոռը, Սյուզաննան և Մանուկը:

Վերջին հետազոտական դասի ընթացքում կիրառեցի,ինձ համար նոր բացահայտված մի հնար,սովորածը պարզելու հնարը՝լուսակիր մեթոդի միջոցով: Այս մեթոդը բավականի հետաքրքիր և արդյունավետ էր.

Լուսակի մեթոդ.

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչներս դասպրոցեսում տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ ենք անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու,թե ինչ չափով է տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին:Յուրաքնչյուր աշակերտ բարձրացնում էիրմոտ գտնվող կանաչ,դեղին, կարմիր թղթերից մեկը: Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը,նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման:

Եթե բարձրացնում է դեղին թերթիկը,նշանակում է մասնակի է յուրացրել թեման:Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները,ովքեր չեն յուրացրել թեման:Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է,ապա նախընտրելի է,որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային:Իսկ եթե թիվը մեծ չէ,ապա կանաչ գույն բաձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

Ամփոփում

Այս հետազոտական աշխատանքը իրականացնելիս եկա այն եզրակացության,որ տարբերակված ուսուցումը ամենաարդյունավետ ռազմավարությունն է՝կրթության որակի խթանման համար: Եթե յուրաքանչյուր ուսուցիչ կիրառի տարբերակված ուսուցման մոդելը,ապա կհասնի իր նպատակին:

Հետազոտական աշխատանք իրականացնելիս դիտարկումներ եմ կատարել նաև 10-րդ,11-րդ և 12-րդ դասարաններում,որտեղ ևս առկա է նման խնդիրներ: Գործընկերներիս հետ Հարցումների, քննարկումների,վերլուծությունների արդյունքում եկանք այն կարծիքի, որ տարբերակված ուսուցումը ունի իր մեծ,դրական առավելությունը կրթական որակի բարելավման գործում: Դասալսող գործընկերներս էլ դրական գնահատեցին դասարանում անցկացվող հոտազոտական աշխատանքս:

Տարբերակված ուսուցումը իր մի շարք դրական կողմորից զատ ունի նաև բացասական կողմեր:

Դրական կողմերն են՝

1. Չափազանց արդյունավետ է օժտված և հատուկ կարիք ունեցող սովորողների համար:
2. Առաջադրանքների ընտրության հնարավորությունը սովորողին դարձնում է ավելի պատասխանատու սեփական ուսման հանդեպ.
3. Ուսման մեջ ներգրավվածությունը աշակերտի մոտ ձևավորում է ձգտում, ինքնուրույնություն և ինքնավստահություն.

Բացասական կողմն այն է,որ՝

1. Տարբերակված ուսուցումը պահանջում է ավելի շատ ժամանակ դասի պլանավորման համար.
2. Այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ և դպրոցի, և դպրոցականների շրջանում:

Այս հետազոտական աշխատանքս կարող եմ գնահատել դրական,քանի որ մասնակիորեն կարողացա հասնել՝ նախաբանում,հետազոտական համատեքստում վեր հանված խնդրի լուծմանը:

Այս աշխատանքի ընթացքում եկա այն եզրահանգնման, որ նման խնդիրը ամբողջությամբ հաղթահարելու,վերջնաարդյունքը տեսնելու և աշակերտների մոտ մեծ, դրական առաջընթաց ունենալու համար, անհրաժեշտ է երկարաժամկետ հետազոտության ընթացք:

Բովանդակություն

1. Նախաբան էջ2
2. Հետազոտական համատեքստ էջ4
3. Գործնական համատեքստ էջ 6
4. Հետազոտական ընթացք էջ 11
5. Ամփոփում էջ 17

Գրականություն

1. Ս.Խաչատրյան - Ուսուցման արդյունավետ հնարներ. Եր. 2020թ. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ.
2. А.А.Балаев - Активныеметодыобучения .
3. М.М.Анцибор - Активныеформыиметодыобучения.
4. Յու.Կ.Բաբանսկի -Մանկավարժություն. Եր.1986թ.
5. Ժամանակակիցմանկավարժականմոտեցումներըզործողության մեջ. - Եր.2005թ.